# Տոկոսագումարների հաշվարկման կարգը

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ.** ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ Է ԿԱԶՄՈՒՄ ՎԱՐԿԻ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐԸ, ՈՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ Է ՎԱՐԿԻ ՆՎԱԶՈՂ ՄՆԱՑՈՐԴԻ ՆԿԱՏՄԱՄԲ: ՎԱՐԿԻ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՍՊԱՌՈՂԻ ՀԱՄԱՐ ՊԱՏՇԱՃ ԿԵՐՊՈՎ և ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ և ԱՅԼ ՎՃԱՐՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ:

## *Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման բանաձևը*

Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով հետևյալ բանաձևը.

$$A=\sum_{n=1}^{N}\frac{K_n}{(1+i)^{\frac{Dn}{365}}}$$

որտեղ՝

i - տարեկան փաստացի տոկոսադրույք

A - սպառողին տրամադրվող վարկի սկզբնական գումար

n - սպառողի կողմից վարկի մարմանն ուղղված (վարկիի մայր գումար, տոկոսագումարներ և(կամ) այլ վճարումների գումարներ) վճարի (ներառյալ վարկի ստացման պահին կատարվող վճարի) հերթական համար

N - վարկի մարմանը (վարկի մայր գումար, տոկոսագումարներ և(կամ) այլ վճարումների գումարներ) ուղղված վերջին վճարի համար

Kn - սպառողի կողմից վարկի ստացման պահին և(կամ) վարկի գործողության ընթացքում կատարված հերթական՝ n-րդ վճարի գումար (մայր գումար, տոկոսագումարներ և (կամ) այլ վճարումների գումարներ)

Dn - վարկի ստացման օրից մինչև վարկի գումարի հերթական՝ n-րդ մարման օրը ներառյալ ընկած ժամանակահատված՝ արտահայտված օրերի թվով

i - տարեկան փաստացի տոկոսադրույքը կարող է հաշվարկվել, եթե հավասարման մյուս տվյալները հայտնի են վարկավորման պայմանագրից կամ այլ կերպ

## ***Վարկի մարումների  հաշվարկման օրինակ***

- Վարկի գումար՝ 10.000.000 ՀՀ դրամ
- Անվանական տոկոսադրույք՝ 13%
- Մարման ժամկետ՝ 240 ամիս
- Վարկի և տոկոսագումարի մարում՝ ամսական անուիտետ եղանակով
- Վարկի սպասարկման ամսական վճար՝ 5.000 ՀՀ դրամ
- Վարկի տրամադրման միանվագ վճար՝ 93.000 ՀՀ դրամ
- Հայտի ուսումնասիրության վճար՝ 5.000 ՀՀ դրամ

***Վերոնշյալ պայմաններով վարկի  ամսական մարման գումարը կազմում է 122.158 ՀՀ դրամ:***